Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

285
6158
2(075)
Ա-44

Հրատարակութեան Գրաքննութեան Կոմիտեի

ԿՐՕՆԻ ԳԱՍԱԳԻՐՔ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(*Փոփոխած նոր ծրագրի համեմատ*)

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանի

Типографія М. Вартаняца, Троиц. пер. д. № 11

1889

2(075)
Ա-45

010

W 11803

2001

Հրատարակութիւն Կենդրոնական Դրավաճառանոցի

220
555-ԱՀ

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

220
555-ԱՀ
2(075)
Ա-45

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԽ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ Պետական Գրադարան
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
1004
196054

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(*Փոփոխած նոր ծրագրի համեմատ*)

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսես Վարդանեանի
Типографія М. Вартанянца, Троиц. пер. д. № 11
1889

ԱՀ

11667-ակ

Дозволено цензурою, Тифлисъ 23-го Августа 1889 г.
Типографія М. Вартанянца Тройц. пер. д. № 11

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա Զ Դ

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների նոր ծրագիրը նոր պահանջ յառաջացրեց մեր կրօնի դասագրքերի վերաբերմամբ:

Յայտնի է, որ այդ ծրագրով հին եւ նոր կտակարանի կանոնաւոր ուսումը առանձնում է չորրորդ եւ հինգերորդ տարիներում. իսկ առաջին երեք տարիների համար որոշուած են հատընտիր աղօթքներ [1], գլխաւոր տօների բացատրութիւններ եւ համառօտ բացատրութիւն եկեղեցւոյ խորհուրդների եւ ս. պատարագի աղօթքների: Մեր ցայսօր հրատարակուած կրօնի դասագրքերից եւ ոչ միանը չպարունակելով ծրագրած դասընթացքը ամբողջապէս՝ զգացվում էր այդ ծրագրին համեմատ կրօնի դասագրքերի կարեւորութիւնը առաջին երեք տարիների համար:

Ահա այդ կարիքը ստիպեց ինձ ձեռնարկել եռամեայ կրօնի ուսման դասագրքերի պատրաստութեան, որոնցից երկրորդ տարուայ «Կրօնի դասագիրքը» լոյս եմ ընծայում այժմ:

Թէ որքան յաջողել է ինձ խօսել մանուկների հետ, տօների բացատրութիւնները յարմարացնել մանկական հասակին եւ հասկացողութեանը, այդ թող որոշեն հայ կրօնուսոյցները, որոնց արդար դատաստանին յանձնում եմ սոյն դասագիրքը:

ԳԻՒՏ ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

---

[1]) Նորագոյն ծրագրով՝ հոգեւոր երգեր եւ շարականներ:

ՅԱՆԿ

ՄԱՍՆ Ա.

ԵՐԳԵՐ ԵՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Ղազարու յարութեան.
Մեծ երեքշաբաթի.
Մեծ չորեքշաբաթի.
Մեծ ուրբաթի.
Մեծ շաբաթի.
Ս. Զատկի.
Հոգեգալստեան.
Ս. Աստուածածնի.
Ս. Առաքելոց.
Ս. Լուսաւորչի.
Նողակաթի ս. Էջմիածնի.
Նիկիական հանգանակ։

ՄԱՍՆ Բ.

ՏՕՆԵՐ

Սուրբ կոյս Մարիամի առեստումը.
Քրիստոսի ծնունդը.
Յիսուսին տաճար տանելը.
Քրիստոսի մկրտութիւնը.
Յիսուսի քարոզութիւնը, մատնութիւնը, չարչարանքը եւ թաղումը.
Քրիստոսի յարութիւնը.
Քրիստոսի համբարձումը.
Սուրբ Հոգու գալուստը.
Քրիստոսի սուրբ Խաչի վերացումը.
Քրիստոսի սուրբ Խաչի գտնելը։

ՄԱՍՆ Ա.

ԵՐԳԵՐ ԵՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Ա.

ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Կենդանութեանց՝ բաշխող Քրիստոս 'ի Բեթանիա եկաւորեալ այսօր. բարեկամին Ղազարու պարգեւէ զկենդանութիւն։

Տնօրինաբար արտասուելով ընդ Մարթայի և ընդ Մարիամու ողբակցէր, և որպէս մարդ հարցանէր ուր եդիք զՂազարոս։

Եւ որպէս զԱստուած բարբառով յարուցանէ 'ի մեռելոց զչորեքօրեայն. և զուզընթաց ձայնին մեռեալն եկ արտաքս անապական։

Բ.

ՄԵԾ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Իմաստուն կուսանքն պատրաստեալ իւղ լապտերաց. ելին ընդ առաջ երկնաւոր փեսային վառեալ լապտերօք։

Իսկ յիմարաց կուսիցն ունայնացեալք 'ի յիւղոյ. անպատրաստ գտան գալստեան փեսային շիջեալ լապտերօք։

Վասնորոյ և մեք պատրաստեսցուք իւղ հոգևոր. զի մոցուք 'ի յառագաստ անմահ փեսային վառեալ լապտերօք։

Գ.

ՄԵԾ ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Նոր սքանչելիք այսօր տեսանեմք յաշխարհի 'ի մէջ հողեղինաց. արարածք Արարչին սպանութեան խորհին զխորհուրդ։

Որ բանիւն իւրով զերկինս և զերկիրս հաստատեաց յոչնչէ գոյացուցեալ. վաճառի այսօր դիւրագին ընդ երեսուն արծաթոյ։

Ով յուդաս արտասուելի երկնաւոր վարդապետին սպանութեան խորհի զխորհուրդ. մատնելով անօրինաց զի խաչեսցի 'ի մէջ երկրի։

Դ.

ՄԵԾ ՈՒՐԲԱԹԻ

Արծաթասիրութեամբն մոլեալ յուդա. զիւր զմեծ զվարդապետն ընդ երեսուն արծաթոյ հրէիցն մատնէր։

Ընդ որում ես համբուրեցից, ասէ՝ զնա կալարուք. ով համբոյր նենգութեան նշան և առիթ մահու։

Մերկացաւ յինքենէ զաստուածային սուրբ հոգին. և զգեցաւ զսատանայ որպէս հանդերձ արկաւ զիւրեաւ։

Ե.

ՄԵԾ ՇԱԲԱԹԻ

Յովսէփ ճշմարիտ և արդար հայցէր 'ի Պիղատոսէ զՀասարակաց զպարզևատուն. որ տուաւ մեզ դանձ անկողոպտելի։

Պատեալ սուրբ կտաւօք զմարմինն տէրունական զարկողն զլոյս որպէս զօթոց. որ զգեցոյց մեզ զգեստ անկողոպտելի։

Եղաւ 'ի Նորափոր 'ի վիմի և մատա-
նեաւ կնքեցաւ, որ զնախաստեղծն կենդա-
նացոյց. և զմարդկան կապանս մահու ելոյծ։

Զ.

Ս. ՋԱՏԿԻ

Ընդ արշալոյսն առաւօտուն կանխեալ
կանանցն 'ի գերեզմանն ասելով՝ Քրիստոս
յարեաւ 'ի մեռելոց։

Եւ առ նոսա ասէր հրեշտակն. զի խընդ-
րէք զկենդանին ընդ մեռեալս. Քրիստոս
յարեաւ 'ի մեռելոց։

Փութացարուք ով սուրբ կանայք և
պատմեցէք աշակերտացն ասելով. Քրիստոս
յարեաւ 'ի մեռելոց։

Է.

ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Այսօր երկնայինքն ուրախացան ընդ
երկրաւորացս նորոգումն. քանզի նորոգողն
էից հոգին էջ 'ի սուրբ վերնատունն. որով
նորոգեցան դասք առաքելոցն։

Ը.

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Անկանիմք առաջի քո Աստուածածին.
և աղաչեմք զանարատ զկոյսդ։

Բարեխօսեա վասն անձանց մերոց. և
աղաչեա զմիածին որդին։

Փրկել զմեզ 'ի փորձութենէ. և յամենայն
վտանգից մերոց։

—

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ
կոյս Աստուածածին Մարիամ մայր Քրիս-
տոսի. մատո՛ զաղաչանս մեր որդւոյ քո և
Աստուծոյ մերոյ։

Թ.

Ս. ԱՌԱՔԵԼՈՅ

Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպք
և բարձր աշտարակք. ոսկեղէն բաժակք
և ժիր մատռուակք. Հայաստանեայց հաւք
հոգևորք Բարդուղիմէոս և Թադէոս. բա-
րեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց։

Ժ.

Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Այսօր զիմանալի լուսոյն ծագողն 'ի խաւարի նատելոցս. զԳրիգորիոս սուրբ Հայրապետն, եկայք վերապատուեսցուք:

Այսօր զանապական հոգւոյն պարգեւս բաշխող որդւոց Թորգոմայ. յորդիս լուսոյ նոփաւ ծնեալք. եկայք վերապատուեսցուք:

Այսօր զաստուածային բանին պատմողն 'ի Հայաստան աշխարհի. աշակերտեալք նմա մանկունք. եկայք վերապատուեսցուք:

Այսօր երգէ եկեղեցի որդւովք իւրովք ընդ հրեշտակս, յիշատակի Լուսաւորչին փառք 'ի բարձունս Աստուծոյ:

ԺԱ.

ՇՈՂԱԿԱԹԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Էջմիածինն 'ի հօրէ և լոյս փառաց ընդ նմա. ձայնք հնչեցին սանդարամետք անդընդոց:

Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրի-

գորի. պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:

Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ. քանզի 'ի սմա ծագեաց մեզ լոյս 'ի Հայաստան աշխարհի:

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա և զերկրպագուս Անուանդ Քում պահեա 'ի խաղաղութեան:

Բարեխօսութեամբ վերին Քո զօրաց միշտ անշարժ պահեա զԱթոռն Հայկազնեան:

ԺԲ.

ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԴԱՆԱԿ

Հաւատամք 'ի մի Աստուած 'ի Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից:

Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ հօրէ՝ միածին, այսինքն էութենէ հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճըշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ

արարած։ Նոյն ինքն 'ի բնութենէ հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և անտեսանելիք։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ։

Յերրորդ աւուր յարուցեալ։

Ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նըստաւ ընդ աջմէ հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և 'ի սուրբ հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ 'ի սուրբսն։

Հաւատամք և 'ի միմիայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի։

'Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն։

'Ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

'Ի յարութիւնն մեռելոց, 'ի դատաստանն յաւիտենից, հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի. կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ հոգի. կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինիլ զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ հոգին. և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։

Ս. Գրիգոր Լուսաւորչի ասած

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով սրբոյ երրորդութեան և միոյ աստուածութեանն հօր և որդւոյ և հոգւոյ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

—

ԺԳ.

Պարմին Տէրունական և Արիւն Փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնքն յաներևոյթս երգեն և ասեն անհանգիստ բարբառով. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց:

ԺԴ.

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
Որ էն Աստուած աստ բազմեցաւ,
խաղաղութեան ձայն հնչեցաւ,
սուրբ ողջունիս հրաման տուաւ:
եկեղեցիս միանձն եղև.
համբոյրս յօդ լրման տուաւ,
թշնամութիւնն հեռացաւ.
սէրն յընդհանուրս սփռեցաւ.
արդ պաշտօնեայք բարձեալ զձայն.
ասք օրհնութիւն ի մի բերան.
միաբնական Աստուածութեանն.
որում Սրովբէքն են սրբաբան:

ԺԵ.

Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց: Լի են երկինք և երկիր փառաւք քո: Օրհնութիւն ի բարձունս. օրհնեալ որ եկիր և գալոցդ ես անուամբ Տեառն. Ովսաննա ի բարձունս:

ԺԶ.

Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական Սեղանոյ քոյ: Բաշխելով զմարմինդ և զարիւնդ ի փրկութիւն աշխարհի. և կեանք անձանց մերոց:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Центральная Библиотека
7/XI 1922
Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԱՍ Բ.

ՏՕՆԵՐ

ԺԷ.

ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԱՒԵՏՈՒՄԸ

(Ղուկ. ա. 26—38)

Մօտ 1900 տարի սորանից առաջ Աստուծոյ հրեշտակը Հրէաստանի Գալիլիա գաւառի Նազարէթ քաղաքում երևեցաւ մի կոյսի, որ նշանուած էր Դաւթի ցեղից մի մարդու հետ, որի անունն էր Յովսէփ. իսկ կոյսի անունը Մարիամ էր: Թէ Մարիամը և թէ Յովսէփը թագաւորական ցեղից էին:

Հրեշտակը ասաց Մարիամին. «Ուրախացիր Բերկրեալդ, Տէրը քեզ հետ է»: Մարիամը այս խօսքերը որ լսեց՝ շփոթուեցաւ և մտածում էր թէ ի՞նչ բանի համար է

այս ողջոյնը: Իսկ հրեշտակը ասաց նորան. «Մի՛ վախենար, Մարիամ, որովհետև շնորհք գտար Աստծուց. ահա՛ կը յղանաս և մէկ որդի կը ծնես, որի անունը Յիսուս կը դնես: Նա մեծ կըլինի և Բարձրեալի որդի կա-



սուի. Տէր Աստուածը կը տայ նորան՝ նորա հայր Դաւթի աթոռը, Յակովբի տան վրայ յաւիտեանս պէտք է թագաւորէ և նորա թագաւորութիւնը վերջ չը պէտք է ունենայ»:

Մարիամը չըհաւատաց հրեշտակի խօսքին, հրեշտակը շարունակեց ու ասաց. «Սուրբ Հոգին կ'իջնէ քո վրադ և Բարձրեալու զօրութիւնը հովանի կըլինի քեզ. որովհետև Նա, որ պէտք է ծնուի քեզանից, սուրբ է և Աստուծոյ որդի կըկոչուի: Աստուծոյ համար անկարելի բան չըկայ»:

Մարիամը հնազանդուեցաւ Աստուծոյ կամքին, ասելով ես Տիրոջ աղախինն եմ, թող լինի ինձ ինչպէս որ ասացիր: Եւ հրեշտակը հեռացաւ նորանից:

—

Այս բանը պատահեցաւ ապրիլ ամսի 7-ին, այդ պատճառով մենք էլ այդ տօնը կատարում ենք ապրիլի 7-ին:

—

Ի պատիւ սուրբ կոյս Մարիամի, որին ասում ենք նաև Տիրամայր-Աստուածածին, երգում ենք այս երգը.

Ուրախ լիր բերկրեալդ, Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո:

ԺԸ.

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

(Մատթ. Ա. 18—25. Ղուկ. Բ. 1—22)

1. Բեղանից շատ հեռու մի երկրում Յովսէփը և Մարիամը ճանապարհ էին գնում. այդ երկիրը գտնվում է դէպի հարաւ, ուր ուելի տաք է, քան թէ մեր երկիրը: Այն երկիրը, ուր նոքա գնում էին, Հրէաստանն էր, հրէաների աշխարհը. նոքա գնում էին Հրէաստանի Բեղղեհէմ քաղաքը:

Բեղղեհէմը մեծ քաղաք չէր. բացի տեղական բնակիչներից այդ միջոցին այնտեղ հաւաքուել էր մեծ բազմութիւն ուրիշ տեղերից, որոնք եկել էին իրանց անունները գրել տալու, որովհետև հրամայած էր, որ աշխարհագիր անեն, այն է բոլոր ժողովրդեան ցուցակագրեն:

Նոքա մեն եկան ամբողջ քաղաքը և տեղ չըգտան իրանց բնակութեան համար. ամբողջ քաղաքում հիւրանոց չըկար, որտեղ

կարողանային բնակուել. մարդկանց բնակարան էլ չկար, բայց անասունների գոմեր շատ կային. ահա այդպիսի գոմերից մէկում, որ շինուած էր մի այրի մէջ, տեղ գտան



նորա գիշերն անցկացնելու: Այրի մէջ կար մուր, խոտ ու դարման անասունների համար:

Այդ գիշերը միևնոյն այրի մէջ Աստուած նոցա մի սիրուն մանուկ պարգևեց: Մանուկին չէին կարող օրօրոցի մէջ

պառկեցնել, որովհետև չունէին այնտեղ օրօրոց կամ գեղեցիկ շորեր. նորան փաթաթեցին խանձարուրի մէջ և դրին այն մսուրի մէջ, ուր անասունները խոտ ու դարման էին ուտում: Մանուկը փափուկ անկողին էլ չունէր, այլ պառկած էր դարմանի վերայ: Այս մանուկն էր Յիսուս Փրկիչը: Մարիամը շատ էր սիրում Յիսուս մանկան. այրը մութն էր, իսկ այն տեղը, ուր մանուկն էր պառկած, լուսաւորուած էր:

Յովսէփն ու Մարիամը իրանց այս ուրախութիւնը սիրով կըպատմէին ուրիշ մարդկանց, եթէ հարևաններ ունենային: Քաղաքի բնակիչները քնած էին. հովիւներն էլ դաշտումն էին. նոքա հսկում էին իրանց հօտերի վրայ, և նոցա յայտնի չէր Փրկչի ծնուելու լուրը:

Ահա այդ բանը Աստուած այսպէս կարգադրեց.—մի հրեշտակ յանկարծ երևեցաւ դաշտում գտնուած հովիւներին. դաշտում բոլորովին մութն էր, որովհետև գիշեր էր. երբ հրեշտակն երևեցաւ՝ նորա շուրջը լուսաւորուեցաւ. հովիւները այդ բանի վերայ

խիստ վախեցան. հրեշտակն ասաց նոցա. մի՛ վախենաք, ահա՛ մեծ ուրախութիւն եմ աւետում ձեզ, որ բոլոր ժողովրդին էլ պէտք է լինի. որովհետև այսօր ձեզ Փրկիչ ծնուեցաւ, որ է մեր Տէր Յիսուս Քրիստոսը և այս ձեզ նշան լինի, որ դուք կըգտնէք մանկանը խանձարուրի մէջ փաթաթած և մսուրի մէջ դրած:

Յետոյ յանկարծ այդ հրեշտակի մօտ երևեցան ուրիշ շատ հրեշտակներ, որոնք փառաբանում էին Աստծուն և ասում. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն»:

—

2. Երբ հրեշտակները հեռացան՝ հովիւները ասացին միմեանց. եկէ՛ք գնանք Բեղդեհէմ քաղաքը և պտրտենք մանկանը, որի մասին հրեշտակը մեզ յայտնեց: Նոքա թողին իրանց հօտերը և շտապով գնացին պտրտելու մանկան. և հրեշտակի տուած նշանի համեմատ գտան այրը. տեսան այնտեղ մանկան խանձարուրով պատած և

մսուրի մէջ դրած. տեսան նաև Յովսէփին ու Մարիամին. երկրպագեցին Փրկչին և պատմեցին, թէ ինչպէս հրեշտակը երևեցաւ նոցա և այն ամենը, ինչոր տեսել էին ու լսել:

Հովիւները էլ չըմնացին Փրկչի մօտ. այլ յետ դարձան դաշտը իրանց ոչխարների մօտ. փառաբանում էին Աստծուն, որ Նա Փրկիչ է տուել իրանց և պատմում էին այդ բանը ամենքին:

—

Ինչպէս որ հովիւները ուրախ էին Փրկչի ծնուելու վերայ, այնպէս էլ մենք ուրախանում ենք ամեն տարի յունուարի 6-ին. այդ օրը մենք հանդիսով տօնում ենք Փրկչի ծնունդը և երգում ենք այս շարականը.—

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեդղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէ՛ք, զի վասն մեր մարմնացաւ:

ԺԹ.

ՅԻՍՈՒՍԻՆ ՏԱՃԱՐ ՏԱՆԵԼԸ—ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

(Ղուկ. Բ. 22–40)

Յիսուսի ծնունդից քառասուն օր յետոյ ծնողները տարան Նորան Երուսաղէմ:

Հրէաների մէջ սովորութիւն կար, որ քառասուն օրուան երեխային տանում էին տաճարը, նուիրում էին Աստծուն և միևնոյն ժամանակ զոհ էին մատուցանում: Հարուստները տանում էին մի գառը, իսկ աղքատները մի զոյգ աղաւնի կամ տատրակ:

Որովհետև Յովսէփն ու Մարիամը աղքատ էին, այդ պատճառով նոքա գառան փոխարէն տարան իրանց հետ մի զոյգ աղաւնի:

Յովսէփն ու Մարիամը Փրկչին տարան Երուսաղէմի տաճարը և իրանց նուէրը տուին քահանային. նա օրհնեց մանուկ Յիսուսին և ընդունեց զոհը:

Այնտեղ կար մի ծերունի մարդ, որի անունը Սիմէօն էր: Սուրբ Հոգին սորան յայտնել էր, թէ սա չըպէտք է մեռնի, մինչև որ խոստացած Փրկչին (Մեսիային)



չըտեսնէ: Այդ ծերունին արդէն գիտէր, որ այդ ժամանակ Փրկիչը պէտք է գայ տաճար:

Երբ ծնողները մանուկ Յիսուսին Երուսաղէմ տարան՝ Սիմէօնը գրկեց նորան, փառք տուեց Աստծուն և ասաց. «այժմ

արձակի՛ր քո ծառայիդ խաղաղութիւնով, Տէ՛ր, թող մեռնեմ, որովհետև իմ աչքերը տեսան Քո փրկութիւնը, որ Դու պատրաստել ես ամեն ազգերի համար. ես տեսայ այն լոյսը, որ պէտք է լուսաւորէ հեթանոսներին. ես տեսայ Քո ժողովրդի փառքը»: Յովսէփն ու Մարիամը զարմացած մնացել էին այս խօսքերի վերայ: Սիմէօն ծերունին Մարիամին ու Յովսէփին էլ օրհնեց:

Այնտեղ մէկ կին էլ կար, որի անունը Անննա էր. նա 84 տարեկան էր. նորա մարդը մեռել էր շատ առաջ և այնուհետև իր բոլոր կեանքը անց էր կացնում տաճարումը. պաս էր պահում, աղօթք էր անում, բարի գործքեր էր կատարում և շարունակ ծառայում էր տաճարին: Աստուած նորան շնորհք էր տուել գալիք բաներն իմանալու. նա մարգարէուհի էր: Նա որ տեսաւ Յիսուսին, ճանաչեց ու սկսեց ամենքին ասել, թէ արդէն աշխարհք է եկել Փրկիչը, որին ամենքը սպասում էին:

Երբ Յովսէփն ու Մարիամը ամեն բան կատարեցին Տիրոջ օրէնքին համաձայն՝

յետ դարձան իրանց քաղաքը Նազարէթ, որ գտանվում էր Գալիլիայում:

Այս տօնը մենք կատարում ենք ամեն տարի Փետրուար ամսի 14-ին և կոչվում է Տեառնընդառաջ:

Հին ժամանակը սովորութիւն կար, որ այդ տօնին կրակ էին վառում եկեղեցու գաւթում, իսկ այժմ եկեղեցում վառում ենք ջահեր և ամեն մարդ մէկ մէկ վառած մոմ եկեղեցուց տանում է տուն:

Ի.

ԳՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

(Մատ. գ. 13—17. Մարկ. Ա. 9—13. Ղուկ. գ. 21—23)

1. Հրէաստանի մէջ ապրում էին երկու բարեպաշտ մարդիկ՝ Զաքարիան և նորա կին Եղիսաբէթը. նորա մի որդի ունեցան, որի անունը Յովհաննէս դրին:

Յովհաննէսը փոքր հասակից անապատը քաշուեցաւ և այնտեղ էր ապրում։ Անապատում ոչ մի տուն չկայ մարդկանց բնակութեան համար. ոչ մի ծաղիկ չէ կանաչում այնտեղ. տեղ-տեղ միայն քանի մի ծառ է երևում։ Այն անապատի միջով անցնում էր մի մեծ գետ Յորդանան անունով։

Յովհաննէսը գեղեցիկ շորեր չունէր հագին. նորա վերարկուն ուղտի ըրդից էր շինած, կոպիտ էր և գեղեցիկ չէր, իսկ մէջքին կապած ունէր փոքրիկ կաշուէ գոտի. նա ուտում էր այնպիսի կերակուրներ, ինչ որ առհասարակ աղքատ մարդիկ են ուտում. օրինակ մարախ և վայրենի մեղր. դինի և օղի չէր խմում նա։ Յովհաննէսը սիրով կատարում էր այն ամենը, ինչոր Աստուած էր կամենում։

Աստուած Յովհաննէսին ասել էր. գնա՛ անապատը և քեզ մօտ եկող մարդկանց ասա.—խոստովանեցէք, որ դուք շատ չարութիւններ էք արել և խօսք տուէք, որ այսուհետև բարի մարդիկ կըդառնաք։ Նա

կամենում էր ամենքին բարի և ազնիւ մարդիկ դարձնել։ Նա ասում էր ժողովրդին. «ով ձեզանից երկու հանդերձ ունի՝ մինը չունեցողին տայ. ով շատ կերակուր ունի՝ թող նոյնպէս անէ. ոչ մէկից բան մի՛ խլէք»։ Շատ մարդիկ խոստովանում էին իրանց չար գործերը։ Յովհաննէսը շատ էր ցաւում, որ մարդիկ այդ տեսակ չարութիւններ են արել. և նոքա խոստանում էին, որ իրանց կուղղեն։ Նոքա սրտանց ցանկանում էին Փրկչին տեսնել, որը նոցա բարի և ազնիւ մարդիկ պէտք է դարձնէր։ Այդպիսի մարդկանց մկրտում էր Յովհաննէսը Յորդանանում։

—

2. Այդ ժամանակ Փրկիչը այլևս մանուկ չէր. նա արդէն երեսուն տարեկան էր։

Ցիսուսն էլ Գալիլիայից Յորդանան գընաց Յովհաննէսից մկրտուելու։ Առաջ Յովհաննէսը չէր ուզում նորան մկրտել, որովհետև գիտէր, որ Քրիստոսը ոչինչ յանցանք չունէր։ Քրիստոսը միւս մարդկանց պէս չէր կարող ասել թէ.—ես կամենում եմ

ինձ ուղղել, բարի և ազնիւ մարդ դառնալ, որովհետև նա արդէն սուրբ էր և արդար: Դորա համար Յովհաննէսը ասաց նորան.— «ես պէտք է քեզանից մկրտուեմ, դո՞ւ ես ինձ մօտ գալիս». բայց Քրիստոս պատասխանեց. թո՛ղ այդ խօսքերը, դու միայն ինձ մկրտիր, ես կամենում եմ կատարել այն ամենը, ինչոր Աստուած սահմանել է մարդկանց փրկութեան համար: Յովհաննէսը հնազանդուեցաւ Փրկչին և մկրտեց նորան Յորդանանի մէջ:

Եւ որովհետև Յովհաննէսը մկրտեց Քրիստոսին, դորա համար էլ նորան ասում ենք Յովհաննէս Մկրտիչ:

Յիսուսը արդէն կանգնած էր Յորդանանի մէջ և աղօթում էր: Հէնց այդ միջոցին՝ երկինքը բացուեցաւ. Յովհաննէսը տեսաւ, որ Աստուծոյ Հոգին աղաւնու կերպարանքով իջնում էր Նորա վերայ և ասաց. «Դա է իմ սիրելի Որդին, որին ես հաւանեցի»:

—

3. Քրիստոսի մկրտութիւնը, այն է Զատիկը, մենք տօնում ենք Ծննդեան հետ միասին յունուար ամսի 6-ին. այդ օրը հոգևորականները իբրև յիշատակ Քրիստոսի մկրտութեան՝ եկեղեցական հանդիսով ժողովրդի հետ գնում են գետը, ուր Խաչը ջուրն են դցում և Խաչով, Աւետարանով ու Սուրբ Մեռոնով օրհնում են ջուրը և ասում են այս տաղը.

Այսօր ձայնն հայրական յերկնից լսեալ հաճոյական, սիրեցելոյ

Որդւոյ վկայ.—այ յորդորէ, դեռ յորդորէ, դեռ Յորդանան. յորդորական ձայնիւ երգէր մեծ Կարապետն Յովհաննէս։

Այսօր եկեալ Աստուածորդին 'ի Յորդանան խոնարհութեամբ, ջրով մկրտիլ 'ի Յովհաննէ. . .

Այսօր Մկրտիչն Յովհաննէս 'ի մկրտիլն հրաժարէր, թէ ինձ պարտէ 'ի քէն մկրտիլ. . .

Այսօր գոչէր քաղցր ձայնիւ Աստուածորդին Կարապետին՝ պարտէր զօրէնսն կատարել. . .

ԻԱ.

ՅԻՍՈՒՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ, ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ, ՁԱՐՁԱՐԱՆՔԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ

1. Յիսուս իր քարոզներով յայտնում էր մարդկանց թէ՝ ինքն է Աստուծոյ Որդին, և ուղարկուած է Նորանից՝ մարդկանց փրկութեան ճանապարհը ցոյց տալու հա-

մար։ Նա ասում էր՝ մեր երկնաւոր Հայրը սուրբ է, գթած է, բարի է. Նա սիրում է մեզ աւելի քան մի հայր իր հարազատ որդուն. ուրեմն մենք էլ պէտք է սրտով և հոգւով սիրենք մեր երկնաւոր Հօրը՝ Նորա կամքը կատարելով, այն է՝ պէտք է լինինք բարի, արդար, ճշմարիտ և գթած դէպի մեր ընկերները։

Նա ասում էր.—ով այս իմ խրատները կը կատարէ, նա է իմ Հօր սիրելի որդին և ժառանգ արքայութեան։ Յիսուս ինչ որ քարոզում էր խօսքով, նոյնը կատարում էր և գործով. Նա բարի էր, սիրում էր մանուկներին, մեծերին, արդարներին և մեղաւորներին. Նա խղճում, ողորմում և բարութիւններ էր անում այն ամէն մարդկանց, որոնք հաստատ հաւատով և յուսով իրան էին դիմում։

Նա բժշկում էր հիւանդներին, դիւահարներին, կաղերին, կոյրերին, անդամալոյծներին և յարութիւն էր տալիս մեռելներին։ Յիսուսի այս ամէն բարերարութիւնները և Աստուածային նշանները տես-

նելով օրէցօր շատանում էր Նորա աստուա-
ծութեանը հաւատացողների և Նորա խը-
ր առները պահողների թիւը։

---

2. Բարի մարդիկ առհասարակ ունե-
նում են աշխարհիս վերայ իրանց չար թըշ-
նամիքը. մեր բարի Փրկիչն ևս ունեցաւ իւր չար



թշնամիքը։ Սոքա էին հրէից գպիրները (կարդացողները), քահանաները, քահանայապետները և ուցա հետևողները։ Սոքա՝

դրսից աստուածապաշտ ձևացող՝ և գործ-
քով՝ կեղծաւոր, ագահ, խաբեբայ մարդիկ
էին, որոնց այս պակասութիւնները Յիսուսն
իւր աներկիւղ ճշմարտախօսութիւնով հրա-



պարակ էր հանում ամեն տեղ և խայտառակում։

Յիսուսի այս ընթացքը ձեռնտու չի-

նելով այդ մարդկանց՝ թշնամացան Նորա հետ և Նորան սուտ վկաներով դատապարտեցին դատաւորների առաջ՝ որպէս յանցաւոր, և շատ տեսակ չարչարանքներ տալուց յետոյ մեռցրին խաչի վերայ։

---

3. Երկու հարուստ և բարի մարդիկ, Յովսէփ Արեմաթացին և Նիկոդիմոսը հաստատ հաւատում էին Յիսուսի աստուածութեանը. նոքա վեր առան Յիսուսի մարմինը խաչի վրայից և թաղեցին բարից փորուած մի գերեզմանի մէջ և մի մեծ սալաքար դրին գերեզմանի բերանին։ Յիսուսը իւր մահուանից առաջ ասել էր թէ՝ երեք օրից յետոյ պէտք է յարութիւն առնեմ։ Հրէաները այս խօսքին չէին հաւատում, այլ կարծում էին թէ՝ Յիսուսի աշակերտները դիշերը կըգան, կըգողանան Նորա մարմինը և ամէն տեղ կըհրատարակեն թէ՝ յարութիւն է առել. և այս պատճառով հրէից քահանայապետները կնքեցին Յիսուսի գերեզմանի դուռը և կարգել տուին զինուորներ, որ պահպանեն գերեզմանը։

ԻԲ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. իբ. Մարկ. ժգ. Ղուկ. իգ. Յովհ. ի.)

1. Թաղման երրորդ օրը առաւօտեան վաղ արևի ծագելուց առաջ երկիրն սկսեց դողալ և շարժուիլ։ Աստուծոյ հրեշտակը իջաւ երկնքից։ Հրեշտակի նստած տեղը կայծակի նման լուսաւորուեցաւ. հրեշտակի շորերը սպիտակ էին և այնքան սպիտակ, որ կարծես թէ ձիւն լինէր։

Այդ հրեշտակը գերեզմանի բերանի քարը վերցրեց և նստեց նորա վերայ. երբ գերեզմինը շարժուեց և լոյս եղաւ, զինուորները այնպէս վախեցան, որ կիսամեռ վայր ընկան գետնին։ Վերջապէս երկիւղը հեռացրեցէք ասելացաւ նոցա մէջ, այնպէս որ թողին ու փախան։ Փրկիչը յարութիւն առաւ գերեզմանից և այնտեղ թողեց կտաւը։ Այլևս ոչ ոք չմնաց բացի հրեշտակից, որ նստած էր քարի վերայ։

Ահա այդ միջոցին եկան այդտեղ երեք կանայք. նոցա անուններն էին՝ Մարիամ Մագդաղինացի, Մարիամ Յակոբայ և Սաղոմէ: Նոքա շատ էին սիրում Փրկչին և կամենում էին Նորա մահուանից յետոյ էլ իրանց սէրը ցոյց տալ: Դորա համար էլ գնել էին խունկ և իւղ, որ օծեն Փրկչի մարմինը: Այսպէս էր Հրէից սովորութիւնը. ով մէկին սիրում էր՝ նորա մահուանից յետոյ օծում էր նորա մարմինը:

Եւ այսպէս կանայք առաւօտեան վաղ եկան. արեգակը դեռ չէր ծագել, ճանապարհներին ոչ ոք չկար դեռ. նոցա ոչ ոք չհանդիպեց. նոքա դիտմամբ այսպէս վաղ էին եկել, որ ոչ ոք չխանգարէ իրանց. նոքա խիստ տխուր էին. կանգնած էին մեծ քարի մօտ, որ ծածկում էր գերեզմանի դուռը և մտածում էին. զիտէին որ քարը մեծ է և ծանր, որովհետև թաղման ժամանակ տեսել էին, թէ որպիսի մեծ քար դրին գերեզմանի բերանին. նոքա շատ էին մտածում, թէ ով պէտք է քարը թաւալեցնէր. զինուորների վերայ նոքա չէին

էլ մտածում, որովհետև նոցա յայտնի չէր, թէ Յիսուսի գերեզմանին հսկում էին: Երբ նոքա մտածում էին թէ ինչ անեն, նայե-



ցին գերեզմանին և տեսան քարը գլորած. հրեշտակին դեռ չէին տեսնում: Մարիամ Մագդաղինացին վազեց իսկոյն և պատմեց

աշակերտներին, լաց եղաւ, կանչեց ու ասաց.—Տիրոջը գերեզմանից հանել են և չգիտեմ թէ ո՞րտեղ են դրել։

Միւս երկու կանայք գնացին դէպի գերեզմանը, ներս մտան և Տիրոջ մարմինը այնտեղ չգտան։ Գերեզմանում շորս կողմը նայելուց յետոյ խիստ տխրեցին, որ չգտան Փրկչի մարմինը. նոքա տեսան երկու մարդ, ձիւնի նման ապիտակ և երկայն փայլուն շորերով, որոնք նստած էին այնտեղ։ Գերեզմանը լուսաւորուած էր. կանայք զարհուրեցան, լուսափայլ մարդկանց չկարողացան նայել և ընկան գետնի վերայ։

---

2. Այդ երկու մարդկանցից մինը՝ որ հրեշտակ էր, դիտէր, թէ կանայք ումն էին որոնում։ ուստի ասաց. մի՛ վախենաք, դիտեմ, որ Յիսուս Նազովրեցուն էք խնդրում, կենդանուն մեռելների մէջ ինչո՞ւ էք փընտրում, եկէք և տեսէք ուր որ Նորան դրել են. և յետոյ գնացէք ասացէք աշակերտներին, թէ Քրիստոսը յարութիւն է առել և կենդանի է։ Հրեշտակը յիշեցրեց նոքանց, ինչ որ Փրկիչն ասել էր, թէ պէտք է խաչուեմ, թաղուեմ, և երրորդ օրը յարութիւն առնեմ։ Կանայք խիզոյն յիշեցին Փրկչի խօսքերը, որ արտմութիւնից մոռացել էին։ Նոքա շտապեցին աշակերտներին իմաց տալու, որ սոքա էլ ուրախանան այս բանի վերայ։ Իսկ իրանց պատահողներին ոչինչ չասացին, որովհետեւ խիստ վախենում էին։

Փրկիչը ճանապարհին պատահեց նոցա. նոքա նայեցին Նորան և ուրախացան, իսկ Մարիամ Մագդաղինացին կրկին դարձաւ գերեզմանը և լաց էր լինում։ այն ժամանակ Քրիստոս դուրս եկաւ նորա առաջ. Մարիամն ընկաւ Նորա ոտները, լաց էր լինում և աղօթում։ նա առաջինը տեսաւ Փրկչին նախ քան միւս կանանց պատահելը։

Այս բանը պատահեց Զատկի կիւրակէին. դորա համար էլ այդ օրն ենք տօնում Քրիստոսի յարութիւնը. այդ տօնին մենք յիշում ենք, որ Փրկիչը խաչուեց, թաղուեց և մա-

հուանից երրորդ օրը յարութիւն առաւ և երգում ենք այս երգը.—

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց,
մահուամբ զմահ կոխեաց և յարու-
թեամբն իւրով մեզ զկեանս պար-
գևեաց. նմա փառք յաւիտեանս.
ամէն:

ԻԳ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ.

(Մարկ. ԺԶ. 19. Ղուկ. ԻԴ. 46—59. Գործք առաքելոց Ա. 1—14)

Քրիստոս իւր յարութիւնից յետոյ քառասուն օր էլի մնաց երկրիս վրայ. այդ քառասուն օրուայ ընթացքում շատ անգամ երևեցաւ իւր աշակերտներին և ուրիշ բարեպաշտ մարդկանցը և ցոյց տուեց նոցա, որ ինքը մեռած չէ, այլ կենդանի է: Աշակերտները բոլորն էլ տխուր էին, երբ Քրիստոս խաչի վերայ մեռաւ. իսկ այժմ ու-

բախանում էին, որ Նա կրկին կենդանի է:

Երբ յարուցեալ Փրկիչը աշակերտների մօտ էր գալիս, սովորաբար կարճ ժամանակ էր մնում նոցա մօտ. մի անգամ էլ յանկարծ անյայտացաւ նոցա աչքից: Քանի որ նոցա մօտ էր, շատ բաներ սովորեցրեց նոցա. Նա ասում էր, թէ շուտով Աստուծոյ մօտ պէտք է գնայ, թէ նոցա այլևս տեսնելու չէ:

Մի անգամ Յիսուս իւր բոլոր աշակերտներին հաւաքեց Զիթենեաց սարի վերայ և ասաց նոցա. երկնքում և երկրի վերայ ամէն իշխանութիւն տուած է ինձ. ինչպէս ինձ ուղարկեց Հայրը, այնպէս էլ ես ձեզ եմ ուղարկում. ուստի գնացէք այսուհետև և բոլոր հեթանոսներին քարոզեցէք և մկրտեցէք նոցա Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգու անունով: Սովորեցրէք նոցա այն բոլորը, ինչ ես պատուիրել եմ ձեզ:

Եւ ահա Տէրը կանգնած էր իւր աշակերտների հետ Զիթենեաց սարի գլխին. նոքա եկել էին Երուսաղէմից և բարձրացել էին այստեղ: Երուսաղէմը շատ մօտիկ

է Զիթենեաց սարին։ Քրիստոս իւր տասն-
երկու առաքեալների հետ այս լեռան վերայ
խօսեց ու ասաց.—սպասեցէ՛ք Երուսաղէ-
մում մինչև որ կուղարկեմ ձեզ մօտ Սուրբ-



թարող Սուրբ Հոգին, ինչպէս որ խոստա-
ցել եմ։ Այս որ ասաց՝ բարձրացրեց ձեռ-
քերը և օրհնեց նոցա և համբարձաւ եր-

կինք, ամպը ծածկեց Քրիստոսին նոցա աչքե-
րից, այնպէս որ այլ ևս չտեսան Նորան։

Աշակերտները խիստ զարմացան և ապ-
շած երկինք էին նայում Տիրոջ ետևից.
ահա երևեցան նոցա երկու մարդ սպիտակ
շորերով, որոնք կանգնած էին նոցա մօտ
և ասում էին. ի՞նչ էք կանգնել այստեղ և
երկինք նայում։ այս Յիսուսը, որ ձեզանից
հեռացաւ ու երկինք բարձրացաւ՝ կրկին կը-
գայ։ Աշակերտները այս բանի վերայ շատ
ուրախացան և աղօթեցին. և Զիթենեաց
սարից յետ դարձան Երուսաղէմ, ինչպէս
Քրիստոսը նոցա հրամայել էր։ Բայց նոքա
այլ ևս տխուր չէին, որ Փրկիչը նոցա մօտ
չէր. նոքա այժմ շատ էին ուրախանում։
միշտ սաճարումն էին, գովաբանում և
օրհնում էին Աստծուն։

—

Այս տօնը մենք կատարում ենք Զատկի
տօնից քառասուն օր անց և կոչվում է
Համբարձում։

ԻԴ.

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ

(Գործք առաքելոց գլ. Բ)

Փրկիչն այլ ևս իւր աշակերտների մօտ չէր, որ Նորան տեսնել կարողանային. Նա համբարձել էր երկինք. բայց երբ Նա դեռ աշակերտների մօտ էր, քարոզում էր նոցա և ասում էր, թէ երբ Ես ձեզանից կըհեռանամ, Սուրբ Հոգին երկնքից կուղարկեմ, նա միշտ ձեզ մօտ կըլինի, կըմխիթարէ և կըզօրացնէ ձեզ. մնացէք Երուսաղէմում մինչև Սուրբ Հոգին կընդունէք:

Այսպէս էլ կատարեցին աշակերտները. նոքա մնացին Երուսաղէմում, վերնատանը աղօթում էին Աստծուն և սպասում էին Սուրբ Հոգուն: Աշակերտները տասն օր էր ինչ որ սպասում էին. արդէն մօտեցել էր այն օրը, երբ նոքա պէտք է ընդունէին

Փրկչի խոստացած մխիթարիչ սուրբ Հոգին:

Հոգեգալստեան նոքա հաւաքուած էին վերնատանը. նոցա մօտ դրած էին գրքեր, որոնք խօսում էին Աստուծոյ մասին. այդ գրքերը Սուրբ Գիրքն են, որ աշակերտները յաճախ կարդում էին. առաջուան գրքերը մեր գրքերի նման չէին. այլ փոքրոքրած էին: Աշակերտները շատ սիրով էին միմեանց հետ. նոքա աղօթում էին Աստուծուն, որ շուտ ուղարկէ Սուրբ Հոգին:



Եւ ահա յանկարծ մի խիստ քամի բարձրացաւ. այն տանը, ուր նստած էին աշակերտները, իջաւ Հոգին Սուրբը և հրեղէն լեզուների բաժանուելով նստաւ նոցանից ամեն մէկի վերայ և ամենքը լցուեցան Սուրբ Հոգւով ու սկսան խօսել զանազան լեզուներով։

Աշակերտները աղօթում էին Աստծուն և շնորհակալութիւն յայտնում Նորան, որ Փրկիչ ուղարկեց իրանց համար և Որը նոցա համար մեռաւ. նոքա աղօթում էին և Փրկչին, Որ իւր անձը զոհեց նոցա համար։

Մեզանից հեռու երկիրներում բնակվում են ուրիշ մարդիկ, որոնք խօսում են օտար լեզուներով. նոցա խօսածները մենք չենք կարող հասկանալ։ Երուսաղէմից հեռու էլ կենում էին մարդիկ, որոնց լեզուները աշակերտները չգիտէին։ Այդ օտար երկիրների մարդկերանցից շատերը եկել էին Երուսաղէմ Հոգեգալստեանը. երբ աշակերտները Հոգւոյն Սրբոյ շնորհն ստացան,

սկսեցին այդ օտար մարդկանց լեզուներով էլ խօսել. լսողները զարմանում և ասում էին միմեանց. չէ՞ որ սոքա ամենքը գալիլեացիներ են. սոքա որտեղից գիտեն մեր լեզուն, քանի որ սոքա չեն սովորել մեր լեզուները. ոմանք էլ ասում էին թէ հարբել են և անկապ-անկապ խօսում են։

Այդ ժամանակ Յիսուսի աշակերտներից Պետրոսը վերկացաւ տեղից, սկսեց խօսել և ասել.— Հրէաստանի բնակիչներ և դուք՝ որ Երուսաղէմումն էք բնակվում, լսեցէք. մենք հարբած չենք, ինչպէս դուք կարծում էք. մենք խօսում ենք մեր Փրկչի ուղարկած Սուրբ Հոգւոյ շնորհաց լեզուներով։

Ահա այդպէս աշակերտները մարդկանց քարոզում էին Փրկչի մասին. նոքա ասում էին, որ Քրիստոս նոցա համար է մեռել, որ Նա յարութիւն է առել և համբարձել, որ Փրկիչը նոցա հիմայ էլ սիրում է և ցանկանում է երջանիկ անել։ Երբ այս բանը լսեցին մարդիկ՝ հաւատացին առաքեալների խօսքին և այդ օրը մօտ երեք

հազար մարդ հաւատաց, որոնք մկրտուեցան և դարձան բարեպաշտ մարդիկ։

Այս ծոնը մենք կատարում ենք Քրիստոսի համբարձումից տասներորդ օրը և կոչվում է Հոգեգալուստ — Պենտեկոստէ։

ԻԵ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ



1. Որ Տէր Յիսուս Քրիստոսի խաչելութիւնից յետոյ Նորա Սուրբ Խաչը երկու աւազակների խաչերի հետ միասին ընկած էր Գողգոթա սարի գլխին, ուր որ Նոցա խաչեցին։ Հաւատացեալները միշտ գնում էին երկրպագելու Նորան. հրէաները որպէս զի

չբթոցնեն Նոցա պաշտելու Սուրբ Խաչը՝ երեք խաչերը միասին տարան ձգեցին Քրիստոսի գերեզմանի այրը եւ բերանը ծածկեցին քարով եւ հողով։

Կղոդէս կայսեր կին Պատրոնիկէ թագուհին, որ Քրիստոսի հաւատացող էր, գտաւ Սուրբ Խաչը առաջին դարում և Յակոբոս Տեառնեղբայրը բարձրացնելով Սուրբ Խաչը ասաց այս երգը.

Խաչի քո, Քրիստոս, երկիրպագանեմք, և զթաղումն քո մեծացուցանեմք, և զսուրբ յարութիւնդ քո փառաւորեմք։ Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն զի եկն 'ի ձեռն Խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի, սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ յարեար 'ի մեռելոց, ողորմեա՛ մեզ։

Այս տեղից սկսած հաւատացեալները սկսեցին Սուրբ Խաչի Վերացման ծոն կատարել ամեն տարի։

2. Քսան տարիներ անցնելուց յետոյ հեթանոսները որպէս զի արգելեն քրիստոնեաներին Գողգոթա գնալ և Քրիստոսի գերեզմանին երկրպագութիւն տալ՝ շինեցին այնտեղ կռատուն: Կոստանդիանոս թագաւորի մայր Հեղինէ թագուհին Քրիստոսից 327 տարի անց քանդել տալով այդ կռատունը՝ գտաւ Փրկչի գերեզմանը և սուրբ Խաչափայտը:

Երուսաղէմի Մակարիոս պատրիարգը մեծ հանդիսով բարձրացրեց Սուրբ Խաչը ժողովրդին ցոյց տալու և ամենքը երկրպագութիւն տուին նորան:

Խաչվերացի տօնը մենք կատարում ենք սեպտեմբեր ամսին:

—

3. Քրիստոսի Սուրբ Խաչը փառաւոր ամանի մէջ դրուած պահվում էր Գողգոթա սարի վերայ շինուած մեծ եկեղեցու մէջ և հաւատացեալները գնում էին երկրպագութիւն անելու նորան:

Քրիստոսից 614 տարի յետոյ Պարսից Խոսրով թագաւորը Երուսաղէմ քաղաքը առաւ ու կողոպտեց. գերի տարաւ շատ քրիստոնեաներ և նոցա հետ Երուսաղէմի Զաքարիա պատրիարգին. Քրիստոսի Սուրբ Խաչն էլ եկեղեցուց վերցնելով տարաւ իւր տէրութեան մայրաքաղաքը Դաւրէժ և դրաւ թագաւորական գանձարանում:

Սա մէկ պատիժ էր, որ Աստուած տուեց քրիստոնեաներին իրանց մեղքի համար: Բայց Աստուած ներող է. ինչպէս գիտէ պատժել, այնպէս էլ ողորմում է իրան հաւատացողներին: Այդ ժամանակ Յունաստանում թագաւորում էր Հերակլը. Աստուած տուեց նորան քաջութիւն, այնպէս որ Պարսից թագաւորը խոնարհեցաւ նորա առաջ և ուզեցաւ հաշտուիլ Հերակլի հետ: Հաշտութեան պայմաններից մէկն էլ այն էր, որ պարսիկները Քրիստոսի Սուրբ Խաչը պէտք է յետ դարձնէին. այդպէս էլ եղաւ. Պարսից թագաւորը Սուրբ Խաչը իւր փառաւոր ամանովը յետ դարձրեց: Գերի տարուած քրիստոնեաներն էլ ազա-

տուեցան և յետ դարձան Երուսաղէմի Զաքարիա պատրիարգի հետ միասին։ Այս պատճառով Հերակլ կայսրն էլ Երուսաղէմ գնաց և մեծ հանդէս կատարելով վեր առաւ Սուրբ Խաչը և նորից տարաւ դրեց Գողգոթա սարի գլխին շինուած եկեղեցու մէջ։

—

Այս բանը պատահեցաւ Քրիստոսից 629 տարի յետոյ սեպտեմբեր ամսի 14-ին։ Մեր եկեղեցին էլ այդ տօնը կատարում է սեպտեմբեր ամսին։

ԻԶ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԳՏՆԵԼԸ

ԳԻՒՏ — ԽԱՉ

1. Յիսուս Քրիստոսի երկինք համբառնալուց յետոյ՝ հրէաները իրանց պատիժը ստացան. կռապաշտ հռոմայեցիները եկան և հրէաներին շարչարեցին ու գերի տարան։ Բայց որովհետև հրէաները Քրիս-

տոսի դէմ ատելութիւն ունէին, այդ պատճառով էլ Քրիստոսի գերեզմանի տեղը Խաչափայտի հետ մէկտեղ հողի տակ էին թաղել։ Մի քանի տարուց յետոյ հեթանոսներն էլ Յիսուսի գերեզմանի փոսը հողով լցրին և նորա վերայ տաճար շինելով կուռք դրին այնտեղ։ Որովհետև խեղճ քրիստոնեաները շարունակ նեղութիւն էին կրում թէ հրէաներից և թէ հեթանոսներից, այդ պատճառով չըկարողացան մէկ հնար գտնել, որ այն տեղը չապականուի և այն պատուական գանձը հողի տակ չմնայ։

Երեք հարիւր տարի անցնելուց յետոյ՝ Աստուած իւր անչափ մարդասիրութիւնով սուրբ եկեղեցուն խաղաղութիւն շնորհեց։ Կոստանդիանոս կայսրը քրիստոնեայ դարձաւ և հրամայեց Քրիստոսի սուրբ գերեզմանի տեղը սիրուն եկեղեցի շինել. Կոստանդիանոսի մայր սուրբ Հեղինէ թագուհին էլ գնաց Երուսաղէմ թէ Սուրբ տեղիրը տեսնելու և թէ գլուխ բերելու այդ եկեղեցու շինութիւնը։

Երբ որ Հեղինէն Երուսաղէմ հասաւ՝ ուզեցաւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչափայտը գտնել։ Այդ պատճառով Երուսաղէմի ամէն կողմը պտտել տուեց, բայց 'ի զուր տեղ. որովհետև հրէաների և կռապաշտների ձեռքով Սուրբ տեղերը բոլորովին աւերուել էին։ Յետոյ Հեղինէն փորել տուեց այնտեղ, ուր որ խաչուած էր Փրկիչը. խորը փորելուց յետոյ այնտեղ գտաւ Փրկչի գերեզմանը և նորա մօտ երեք խաչ, Յիսուսի ձեռքերի ու ոտների մեխերը և խաչի գլխի տախտակը, որի վերայ Պիղատոսը գրել էր։

—

2. Սոցա գտնելուց յետոյ հարկաւոր էր իմանալ թէ որն էր այն խաչը, որի վերայ Յիսուս Քրիստոս մեռաւ։ Սորա ճարն էլ գտան։ Երեք խաչերն էլ դիպցրին քաղաքի մէջ նոր մեռած մէկ պատանուն. երբ որ երրորդ Խաչը դիպցրին՝ մեռած պատանին կենդանացաւ ու սկսեց փառք տալ Աստուծուն։

Աստուածասէր սուրբ թագուհին այս պատուական գանձը գտնելով ուրախութիւնով լցուեցաւ և երկրպագութիւն տուեց Սուրբ Խաչին։ Մի կտոր կտրեց նորանից, վերցրեց իւր հետ, որ իւր որդուն՝ Կոստանդիանոս թագաւորին տանէ. իսկ մնացորդի համար արծաթէ գեղեցիկ ման շինել տուեց թանկագին ակներով զարդարուած և յանձնեց սուրբ Մակարիոս հայրապետին. իսկ սա դրեց այն հոյակապ եկեղեցու մէջ, որ Կոստանդիանոս կայսրը շինել տուեց Գողգոթա սարի գլխին։

Այսպէս ահա գտնուեցաւ Քրիստոսի Սուրբ Խաչափայտը։ Այս տօնը մինչև այսօր էլ մեր եկեղեցին կատարում է հանդիսով հոկտեմբեր ամսին և կոչվում է Գիւտ-Խաչ կամ Խաչ-Գիւտ։

ԳԻՐՔ ԲԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑԻ

Ա.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Հաւատարմութիւնը ամեն արգելքների յաղթում Ռ. Կ. Է. Ֆրանց Հոֆմանի. 1877 . . . . . — 40
2. Խաւարից դէպի լոյս. նոյն Հոֆմանի. 1877 . . . — 40
3. Դօն Քիշոտ Լամանշեցի. Սերվանտէսի 1878 . . . — 70 (սպառուած)
4. Գէորգ Ռոյլէստօն 1879 . . . . . — 60
5. Երրորդ ոսկի. առակ Լակիդէի (պարգեւատրած Ս. Պետերբուրգի Փրօբիլեան ընկերութեան կողմից). 1879 . . . . . — 15
6. Ռօբինզօն. (հրատարակուած Թիֆլիզի տպագրական ընկերութեան) 1881 . . . . . — 60
7. Զեստերտօնի ժառանգը. պատկերազարդ վեպ. 1882 1 —
8. Ակտեա. Տ. Սիսոեվի. 1885 . . . . . — 50
9. Եան Էրնստ Սմօլեար. Ն. Եանչուկի. 1885 . . . — 20

—

Բ.

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

10. Աղօթատետր. Հայոց եկեղեցական եւ արքունի ուսումնարանների համար 1889 . . . . . — 10

11. Կրօնի դասագիրք. երկրորդ տարուայ ուսումն Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար. երրորդ տպագրութիւն 1889 . . . — 25
12. Կրօնի դասագիրք. երրորդ տարուայ ուսումն Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար. երկրորդ տպագրութիւն 1888 . . — 25
13. Կրօնի դասագիրք. առաջին տարուայ ուսումն Հայոց եկեղ.-ծխական ուսում. համար. Վաղարշապատ. 1888 . . . . . — 15
14. Պատի հատուածական Օրացոյց 1889 ժամանակագրութեամբ (սպառուած) . . . . . 1 —
15. Փոքրաղիր օրացոյց. յաւելուածով . . . . . — 10

—

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

Հատուածական օրացոյց 1890 *տարի*

ՇՈՒՏՈՎ ԿՐՏՊԱԳՐՈՒԻ

Դասագիրք Հայոց եկեղեցական տօմարագիտութեան

Դօն Քիշոտ. երկրորդ տպագրութեամբ եւ շքեղ պատկերներով։

286
~~8158~~
0026374
286
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0633912
ՀՀ Ազգային գրադարան
NL0026374
ԱՀ

ԳԻՐՔԱՎԱՃԱՌԱՆՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵ

1	Տէր-Վանդեան՝ Մայրենի Լեզու. ա. տարի.	35	4
2	» » Մայրենի Լեզու. բ. տարի	40	4
3	» » Մայրենի Լեզու. գ. տարի	45	4
4	» » Մայր. Լեզ. քերակ. տարերքը՝ մ. ա.	30	4
5	» » Մայրենի Լեզուի քերակ. տարերքը՝ մ. բ	50	4
6	» » Բացատրութիւն Մ. Լեզուի ա. տարուայ	60	4
7	» » Հայրդի՝ Սրբազ. պատ Հին Կտակ	50	4
8	» » Սրբազան պատմութ. Նոր Կտակարանի	50	4
9	Աղայեանց՝ Ուսումն Մայրենի Լեզուի ա. տարի	25	4
10	» Ուսումն Մայրենի Լեզուի երկ. տարի	40	4
11	» Ուսումն Մայրենի լեզուի երր. տարի	45	4
12	Ս. Մանդինեան՝ Ընտանեկան Աշխարհ՝ երր. տիպ	25	4
13	» Դիւցազնական Աշխարհ՝ երր. տիպ	30	4
14	» Նահապ. և Հայր. Աշխարհ՝ հինգ. տ.	65	4
15	» Բացատրութիւն Ընտ. Աշխարհի	75	4
16	» Հենչէլի թուաբ. խնդիրներ. մ. ա.	40	4
17	» Հենչէլի թուաբ. խնդիրներ. մ. բ.	50	4
18	» Բացատրութիւն ուսուցչաց համար	30	4
19	» Համառօտ Մանկավարժութիւն	1 ր. 50	4
20	Տէր-Ստեփանեան՝ Սկզբունք քր. հաւատոյ	50	4
21	Կոստանեան՝ Ծաղկաքաղ՝ շրջան Ա.	25	4
22	» Ծաղկաքաղ՝ շրջան Բ.	60	4
23	» Ծաղկաքաղ՝ շրջան Գ. գրաբար	40	4
24	Նախաշաւիղ	25	4
25	Սղիշէ ըստ Անձեւացեաց օրինակի	80	4
26	Սիմէոնեան՝ Աշխարհագրութիւն մասն բնական	60	4
27	» մասն քաղաքական	60	4
28	Վարձելեան՝ Դասագիրք թուաբանութեան	70	4
29	Ճ. Գ. և Մ. Պ. Ժոզ. թուաբ. խնդիր. մ. ա.	40	4
30	» Նոյն մ. բ. կոտորակներ	45	4
31	Այվազեան՝ Նախակրթանք մ. ա. (գրաբար)	40	4
32	Տէր-Սարգսեան՝ Հայկական գեղագրութեան օրինակներ	25	4
33	» Վայելչագրութեան դասաւանդութեան կղանակը	20	4
34	Աղանեան Կրօնի դասագիրք. երկրորդ տարի	25	4
35	» — — երրորդ տարի	25	4
36	Տէր-Դաւթեան՝ Рурсск. слово. Учебникъ русс. языка.	50	4
37	Агніевъ. „Первый шагъ“, учебникъ русс. языка.	45	4
38	Захаровъ. Сборникъ примѣровъ для пись. всчисленія	20	4
39	Мартиновскій. Русскіе Писатели для школъ Ч. I.	1 ր. 25	4
40	» Русскіе Писатели Ч. II	1 ր. 25	4